Արձանագրություն N 2

«ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Կոմիտաս 49/4

«09» «03» 2022 թ
ժ.16:00

Նիստին ներկա էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հայկ Զեյնալյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ավետիս Գևորգյան (ԳՊ/ԳԱ),
Միհր Գրիգորյան (ԳՊ/ԳԱ) , Անահիտ Ավետիսյան (ԳՊ/ԲԱ), Աննա Ներսիսյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Նաիրա Մկրտչյան

1. **Տեղեկություններ «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին**

(Հայկ Զեյնալյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 16:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:
2022թ-ի մարտի 09-ից 23-ը, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ -ում՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում, տեղի ունեցավ «**ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/3**» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

1	«Գե Լոջիք» ՍՊԸ		ՀՎՀՀ 00452317 էլ. Փոստ info@geologic.am

2. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Հայկ Զեյնալյան)

2.1 Հրավերով սահմանված՝ Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 1.2 «Գե Լոջիք» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. Կազմակերպության կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերը կնքված չեն էլեկրոնային թվային ստորագրությամբ:
2. Կազմակերպության կողմից ներկայացված հայտի դիմում-հայտարարությունում (Հավելված 1) սխալ է լրացված իրական շահառուների վերեբերյալ տեղեկությունների տողը:
3. Կազմակերպության կողմից ներկայացված հայտում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.3) 4.1.6 կետը լրացված է սխալ:
4. Կազմակերպության կողմից ներկայացված հայտի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) Router-ի նկարագրի հատվածում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի հետ:

2.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 17.03.2022թ. հանձնարարել ընթացակարգի քարտուղարին անհամապատասխանությունների շտկման ծանուցում ուղարկել «Գեո Լոջիք» ՍՊԸ-ին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

2.3 «Գեո Լոջիք» ՍՊԸ -ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակից կազմակերպության հայտերը գնահատվել է բավարար և հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. **Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

3.1 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Չափա բ. Համա ը	Մասնակցի անվանումը	Գնման հայտով նախատեսված ֆինանսական միջոցներ	Ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	*2*		*3*	*4*	*5=3+4*
1	«Գե Լոջիք» ՍՊԸ	16 000 000	15777500	3155500	18933000

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

4. Տեղեկություն ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցներին բանակցություններին մասնակցելու հրավերի մասին

(Հայկ Զեյնալյան)

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել հարձնաժողովի նիստը և հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած **«Գեո Լոջիք» ՍՊԸ-ին** գնային առաջարկի նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա բանակցությունների սույն թվականի մարտի 23-ին ժամը 16:00-ին ք.Երևան Կոմիտաս 49/4 հասցեում (310 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

4.2 Բանակցությունների համար սահմանված ժամին 2022թ. մարտի 23-ին **«Գեո Լոջիք» ՍՊԸ-ի ներկայացուցիչը՝ տնօրեն Թամարա Հակոբյանը ներկայացել է, սակայն գնային առաջարկի նվազեցում չի կատարվել:**

4.3 Հանձնաժողովը որոշեց «ՍՉԱՄ- ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

5.Տեղեկություն ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին

(Հայկ Զեյնալյան)

5.1 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգը ամբողջությամբ հայտարարել չկայացած և հաստատել թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/3 գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Հ.Զեյնալյան
Անդամներ՝		Ա.Գևորգյան
		Մ.Գրիգորյան
		Ա.Ավետիսյան
		Ա.Ներսիսյան
Քարտուղար՝		Ն.Մկրտչյան